



26. ԵՆԳԻՉԱՐՈՒ ԼԵՔԻԱԹՐ

Ժամանակով Շամա քաղքում մի թաքավոր կար: Էս թաքավորը ունեւր մի տղա ու մի աղջիկ: Սրա տղեն մի օր, շունքի գեռ հլա պուճուր էր, գնաց քուչեն ու իրա հմար հոլ էր հաղում: Նա տեհավ, որ մի պառավ կնիկ կուժը ուսին անց էր կենում քուչովը, հոլը քցեց ու նրա կուժը կոտրեց:

Պառավը նրան ուզունց տվեց, ասելով.— Ենդիչարու դարդով մեռնես:

Էրեխեն չհասկացավ, թե էն կնիկը դրանով ի՞նչ էր ուզում ասի: Քանի գնում, էս թաքավորի էրեխեն հալից ընկնում էր: Թաքավորը էլ աշխարհում հեքիմ լմնաց՝ բերեց, համա ոչով շկարաց նրա տղին լավացնի:

Հետո էկավ մի պառավ ու ասեց.— Ես կարամ լավացնի:

Էս պառավը էն կնիկն էր, որ մի վախտ քուչով անց էր կենում, ու թաքավորի տղեն հոլով նրա կուժը կոտրեց:

Էս պառավ կնիկը ասեց թաքավորի տղին.— Կէթաս, քաղաքից դուս մի ծառ կա, նրա տակին մի բուն ա շինած. բնի մեջ իրեք ձու կա: Մին-մին ձվաները կկոտրես ու ինչ որ կուղի՝ կտաս, շունքի նրանց մեջ փարիք կան. ջուր կուղի՝ տո՛ւր, հաց կուղի՝ տո՛ւր, թե չէ էն սհաթին կփախչի ձեռիցդ:

Մեկել օրը թարավորի տղեն ձի նստեց ու գնաց: Շամփի վրանս տեհավ նստել և մի պառավ մարդ: էս պառավ մարդին նա իրա գլխով անցկացածը պատմեց:

Նա ասեց.— Ով դնացել և փարինների մոտ, էլ ետ չի եկել, դու գիտես, դնա: Նլան ծովում փարինները լողանում են, բոլորն էլ աղջիկ են: Նրանք իրանց շորերը ծովի ղրաղին հանել են. կէթաս մեկի շորերը կփախցնես: Ծտեկիցդ որ սար կբղավի՝ «տարա՛ն», ձոր կբղավի՝ «տարա՛ն», քար կբղավի՝ «տարա՛ն», համա դու իսկի ետ թամաշ չանես: Մարդ ա, թե որ փարին հետեկիցդ հասնի ու քեղ ասի. «Արի էթանք ընտեղ հավուզ կա, ես քեղ վրա ջուր կածեմ՝ լողացի, դու ինձ վրա ածա՛ լողանամ», տես հա՛, շլսես նրան:

Տղեն դնաց հասավ փարինների մոտ. նրանք ծովում լողանում էին ու իրանց շորերը ղրաղին հանել էին: Ջանըմսան տղեն, գնաց ու մի փարու շորերը վե կալավ, փախավ: Նրա հետեկից սար ձեն էր տալի՝ «տարա՛ն», ձոր ձեն էր տալի՝ «տարա՛ն», քար ձեն էր տալի՝ «տարա՛ն»: Համա տղեն ձին էն թավուր էր քշում, որ գլուլլա ետեկից չէր հասնի:

Փարին սրա ետեկից ընկավ ու անշախ հասավ նրան ու ասեց.

— Էթանք ընտեղ մի հավուզ կա, ես քեղ վրա ջուր կածեմ՝ լողացի, հետո դու ինձ վրա կածես՝ ես կլողանամ:

Տղեն պառավ մարդի ասածը մտիցը քցել էր, լսեց նրա խոսքին: Փարին տարավ նրան մի հավուզ, վրեն շուր ածեց ու տղեն տեղն ու տեղը քար էլավ, մնաց:

Թաքավորը շատ կացավ, որ իրա տղեն գա, ըսօր, էգուց՝ չէկավ: Թաքավորի աղջիկը, շունքի իրա աղբորը շատ էր սիրում, հալալ քվոր ջիգյար ունեք, ձի նստեց, յարաղ-ասպաբը կապեց ու քշեց դպա իրա աղբոր մոտ: Համա չէր գիտում, թե ուր ա նա: Թաքավորի աղջիկը գնաց, գնաց, ճամփին պատահեց էլի էն պառավ մարդուն, որին որ իրա աղբորը պատահել էր:

— Բարո՛վ, բարի ջա՛ն, էս ճամփով չե՛ս տեհել անցկենալիս մի տասնութ տարեկան ջահել տղամարդի. նա իմ աղբերն ա, էս քանի վախտ ա՛ գնացել և, չի էկել: Մնացել ենք տնով-տեղով շվարած, թե տեհե՛լ ես, ասա, բարի շան, թեղ, վազ եմ, ես պտի էթամ սաղ աշխարք ման գամ. յա աղբորս, իմ հալալ, աչքի լիս աղբորս կգտնեմ, յա թե չէ գլուխս նրան ղուրբան կտամ:

— Որդի,— խոսքի տուտը բռնեց ծեր մարդը,— որ ճամփի

վրա նստած էի, ես տեհա, որ էկավ ու ըստեղից անց կացավ: Ես նրան խրատեցի, որ չէթա, համա նա ինձ շսեց ու գնաց. էն ճամփով հազարավոր մարդիկ են գնացել ու ետ շեն էկել, նա էլ չի ետ գաւ: Համա, թե որ դու ազիզ քիր ես, քու աղբորը սիրում ես, կէթաս Ֆլան ծովը, էնտեղ փարիներ են լողանում, շորերը ջրի զրաշին հանած, գրած են. նրանցից մեկի շորը վեր կկալնես ու կփախչես. ետեիցդ սար ձեն կտա՝ «տարա՛ն», քոլ ձեն կտա՝ «տարա՛ն», համա դու ըսկի շսես: Թե, որդի, փաբին գա հասնի ետեիցդ՝ նրան գու շղմշես, ձիուդ ոտների տակը քցի, էնքան տուր ու ասա՝ «էս սհաթը աղբորս տուր, թե չէ էնքան կտամ, որ տեղն ու տեղը կշորանաս»: Հետո նրան քաշ տալով կտանես մոտիկ հավուզ կա, ընտեղ հազարավոր մարդիկ քար են էլե, նրանց մեջն ա ու քու ազիզ աղբերը. կասես, որ նրանց վրեն ջուր ածի, էն սհաթը կսաղանա քու աղբերն էլ, նրանք էլ, որ քար էլած, կացած են ընտեղ: Տես հա՛, ինչ որ ասեցի՝ մտիցդ շքես. թե չէ բանդ բուրդ ա. դու էլ քար կրնես ու շես կարա քու աղբորը լավացնի:

Ջանըմսան, քյահլան ձին նի էլած, աստաբավորված զոշաղ աղջիկը գնաց: Հասավ էն ջրին, որդի փարիները լողանում էին ու շորերը ծովի զրաղին հանած դրել էին: Նրանցից մինի շորերը փախցրեց ու քշեց ձին: Սար ձեն էր տալի՝ «տարա՛ն», քոլ ձեն էր տալի՝ «տարա՛ն», քար ձեն էր տալի՝ «տարա՛ն», համա զոշաղ աղջիկը առանց ետ մտիկ անելու քշում էր ձին: Փարին էկավ հասավ աղջկանը: Թաքավորի աղջիկը նրան քցեց ոտների տակը ու քաշեց զամշին, տուր թե կտաս, մին, էրկու, մին, էրկու: էնքան տվեց, որ նղավեց:

Նոր որ խելթի էկավ, աղջիկը ասեց.— էլի կծեծեմ, թե որ իմ աղբորը շտաս:

Նոր աղջիկը գնաց նրա հետ հավղի մոտ: Իրա աղբոր վրա ջուր ածել տվեց ու սաղաղավ: էլի ինչքան մարդիկ որ կային քարացած, ըլորի վրա ջուր ածել տվեց ու բոլորն էլ սաղացան: Քիր ու աղբեր իրար փաթաթվեցին ու լաց էլան: Հետո թաքավորի աղջիկը տարավ շորերը ավեց, որ հաղնի ու փարուն վերցնելով քիր ու աղբեր էկան տուն: Ճամփին տղի միտն ընկավ պառավ կնկա ասածը, թե մի ծառ կա, տակը Ենգիշարին¹ ա:

¹ Ենգիշարին փարիների գլխավորն էր (Մ. Բ.):

Տղեն դնաց Ծնդիչարու մոտ ու իրա քվորր ղրկեց մոտիկ գեղերր, որ աց ու ջուր ճարի, շունքի կուզի: Տղեն դնաց բունը քանդեց ու ձվաները վե կալավ: Մինը կոտրեց ձվաներից, ջուր ուզեց՝ կար, աց ուզեց՝ շկար ու դնաց կորավ: Հետո մեկելը կոտրեց, հաց ուզեց՝ շկար, ջուր ուզեց՝ շկար ու նա էլ դնաց կորավ: Էն սհաթին նրա քիրը բերեց դեղերից հաց ու ջուր, ու էն վերջի ձուն կոտրեց, հաց ուզեց նա՝ տվեցին, ջուր ուզեց՝ տվեցին: Էն ձվից դուս էկավ մի սիրուն, աննման փարի աղջիկ, մազերը էրկեն, աչքերը նաշխուն, լուսաթաթախ: Էկան, էկան ճամփին մի մենձ աղբուր պատահեց, որ կլկլրլալեն էթում էր: Էս աղբորի մոտ մի շինարի ծառ կար, Ենդիչարուն, շունքի շէր կարա փախչի, էս շինարու ծառի վրա դրին ու իրանք փարուն, որ մի ջուր տենար թե չէ, էն սհաթին մեջը կմտներ ու կփախչեր, էլ նրան բռնել չէր ըլնի, վե կալան ու տարան Շամա քաղաքը, որ էս շինարու ծառի մոտից շատ հեռու չէր:

Էս վախտը բոշաները էկան էս աղբորից ջուր խմելու: Էն Ծնդիչարու շվաքը որ շէր ընկնում ջրի մեջ, սաղ շուրը լիս էր տալի:

Բոշաքը իրար հետ կոխվ էին անում. մինը ասում էր. «Էս իմ շվաքն ա, որ էսպես լիս ա տալի», մեկելը թե. «Իմն ա»: Կոխվ դալմադալը սարքվել էր:

Ծնդիչարին ծառի վրից ձեն տվեց.— Բոշաներ, էդ շվաքը ոչ քունն ա, ոչ էլ մեկելինը, իմ շվաքն ա էդ, զուր տեղը կոխվ միք տնի:

Բոշաներից մինը նի էլավ ծառը ու Ծնդիչարուն բռթեց քցեց ջուրը ու ինքը նստեց նրա տեղը: Ծնդիչարին որ ջուրն ընկավ, ջրի վրա մի ուհան դուս էկավ:

Թաքավորի տղեն դափով, դուռնով, դռնով Շամա քաղաքից էկավ, որ Ծնդիչարուն տանի: Էկավ, ինչ տենա՝ ծառի վրա մի սևաթարոց աղջիկ:

Տղեն զարմանալով հարցրեց.— Պոռններդ էդ ինչ հաստ են:

Ծնդիչարին պատասխան տվեց.— Թաքավորի ուխարները ըստեղից անց էր կենում, էնքան տը՛ւ, տը՛ւ արեցի, որ պոռններս հասաացան:

— Բա թեքերդ ինչի ա սև:

— Էնրան ծառերին եմ քսել, որ սևացել ու կոշտացել են,— պատասխան տվեց բոշան:

— Բա ոտներդ ինչի ա կտրտած, տրաքտրաքած,— հարցրեց էլի Թաքավորի տղեն:

Բոշեն էլի ուզեց իրան արդարացնել.— էնքան ոտներս տվի ծառովը, որ տրաքտրաքվեցին:

Խեղճ Թաքավորի տղեն չէր իմանում, որ բոշեն էնքան տներ ա շահչիհել բոբիկ ոտով, որ տրաքտրաքվել ա, արինը շրոշրուալե՛ թափում էր:

— Բաս էն էրկեն մազերդ ո՞ւր ա,— հարցրեց Թաքավորի տղեն:

— էնքան արևի տակ նստել եմ, որ թափել են գլխիս վրիցը,— ասեց բոշեն:

Հարխանա՞, հարնայխանա՞, վե կալան բոշին ու տարան քաղաքը: Գնալիս տղեն էն ուհանը վե կալավ ու ծոցը դրեց: էս որ տեհավ բոշեն, ասեց Թաքավորի տղին.

— Թե որ էդ ուհանը շես դեն քցի, էս սհաթը շուրը կընկնեմ:

Թաքավորի տղին լսեց նրան ու դեն քցեց ուհանը, էլավ մի սիրուն, նաշխուն ձիու քուռակ: Թաքավորի տղեն էս սիրուն քուռակին իրա հետ բերեց տուն: Մի քանի վախտ անցկացավ բոշեն էրկուֆոքիս դառավ: Հարցրին, թե ի՞նչ ա ուզում, նա ասեց.

— Միրտս ուզում ա էն քուռակի մսից:

Թաքավորի տղեն հրամայեց քուռակին մորթել: Հենց որ մորթեցին, արինը գետին թափեց, մի մենձ շինարի ծառ դուս էկալու. որ սաղ քաղաքին հով էր անում ու շվաք, էնքան մենձ էր:

Բոշեն ասեց, որ էն շինարին կտրեն ու, շունքի մի քանի օրից հետ էրեխա բերեց, իրա էրեխի հմար օրորոց շինեն: Թաքավորի տղեն չէր կարա չլսի նրան: Հրամայեց, որ կտրեն ու շինեցին նրա էրեխի հմար օրորոց: Համա էս օրորոցը գշերը էրեխին հուփ էր տալի ու ցերեկը բաց թողնում, էնպես որ սաղ գշերը էրեխեն իրա լացով մարդու դանձ էր անում: Բոշեն հրամայեց, որ օրորոցը էրեն ու քամուն տան: էնպես էլ արին. էրեցին ու քամուն տվին: էրաժից մի թող գնաց մի պառավ կնկա տան առաջ թեշու ծիծեռ էլավ ու ընկավ: էս պառավը Շամա Թաքավորի մոտ բուրդ էր գզում ու սրանով իրա մի շոր գլուխը պահում: էս պառավը տանից դուս գալիս էս ծիծեռը տեհավ ու ուրախացավ. վե կալավ ծիծեռը ու տարավ իրա տան փանջարում վե քցեց ու ինքը գնաց Թաքավորի մոտ, որ բուրդ դզի:

Պառավը ստանը շան մազ ունեք, որից նա խալիչա էր գործում։
Իրիկունը տուն էկավ տեհավ, որ շան մազը արբեշում ա դառելի
Նա շատ ուրախացավ, համա չէր գիտում, թե որտեղից ա էս ար-
բեշումը։ Մի օր էլ էկավ տեհավ խալիչի կեսը ինքն իրան գործվել
ա։ Շատ մտածեց, համա չքթավ, թե ով ա գործում։ Մի օր դարաուլ
քաշեց ու տեհավ, որ ծիծեռի միջից մի սիրուն աղօիկ դուս էկավ
ու սկսեց խալիչին գործել։ Նա վրա հասավ ու բռնեց։ Հետո նա իրա
զլիսով անցկացածը բոլորը պատմեց։ Մի օր էս աղջիկն էլ իրա
էրեսը շոր փաթթեց ու գնաց թաքավորի մոտ բուրդ գգելու։ Պա-
ռավը թաքավորի տղին խնդրեց, որ մի սհաթ գա իրա աղջկա մոտ,
նա բան ունի ասելու ու նա իրա գլխով անցկացածը պատմեց ու
էրեսի վրից շորը դին քցեց։ Թաքավորի տղեն էն սհաթը նանաչեց
նրան. բոշին կապեց դաթրի պոչից ու ասեց.

— Տա՛ր, քար տո՛ւր, քոլ տո՛ւր ու մաղերը մենակ հտ բեր։
Իսկ ինքը պսակվեց նրա վրա ու օխտը գշեր հարսանիք էլավ.
Արան, խմեցին, քեֆ արին։

